«ՃՇՀԱՀ ԿՈՂՄԻՑ ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԻ» համաձայն, 2024թ. համար ներկայացված 6 հայտերից, ըստ ոլորտների, հաղթող են ճանաչվել առավել բարձր միավորներ ստացած հետևյալ թեմաները.

1. **«Ճարտարապետություն»** ոլորտում՝ «Երևանի Նուբարաշեն թաղամասի պատմա-մշակութային արժևորման հայեցակարգի մշակում» թեման (թեմայի ղեկավար՝ Էմմա Հարությունյան, ուսանողներ՝ Էլեն Հովհաննիսյան, Տաթևիկ Հայրապետյան, Դավիթ Զալինյան).

2. **«Տեխնիկական գիտություններ»** ոլորտում (շինարարություն և հարակից ոլորտներ)՝ «Հայաստանի Հանրապետության փոքր բնակավայրերի ջրահեռացման և կեղտաջրերի մաքրման տեխնոլոգիաների մշակում» թեման (թեմայի ղեկավար՝ Վարուժան Շամյան, ուսանողներ՝ Խաչիկ Կիրակոսյան, Ռոբերտ Նորամիրյան).

3. **«Դիզայն»** ոլորտում՝ «Հակաականային, բազմաֆունկցիոնալ զինվորական կոշիկի հայեցակարգային դիզայնին աջակցող գիտական համալիր հետազոտութուն» թեման (թեմայի ղեկավար՝ Անի Աճառյան, ուսանողներ՝ Սրբուհի Զիրաքյան, Լուիզա Պետրոսյան).

4. **«Տնտեսագիտություն և կառավարում (շինարարությունում)»** ոլորտում՝ «Շենքերի էներգետիկական սերտիֆիկացում և էներգաարդյունավետության բարձրացման վերլուծություն» թեման (թեմայի ղեկավար՝ Նաիրա Էգնատոսյան, ուսանողներ՝ Լուսինե Մարտիրոսյան, Ալեքսեյ Ռուդոմյոտկին):

Յուրաքանչյուր թեմայի համար տրամադրվող դրամաշնորհը կազմում է երկու միլիոն դրամ:

Հանձնախումբն առանձին դրամաշնորհ է տրամադրել նաև ՃՇՀԱՀ ուսանողական խորհրդին՝ «Ուսումնական գործընթացի մշտադիտարկման և արդյունքների վերլուծություն» թեմայով հետազոտություն իրականացնելու համար (թեմայի ղեկավար՝ Սուսաննա Հակոբյան, կատարողներ՝ Մանե Դաբաղյան, Անի Վարդանյան):